ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 օգոստոսի 2014թ. թիվ 289-Ա

Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ «ԱՔՈՐՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով Ա.Հակոբյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Աղունիկ Հակոբյանին նշանակել «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Ա.Հակոբյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի օգոստոսի 5-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. օգոստոսի 5
ք.Վանաձոր